ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳԲՔԱ-LO-2022/58 ծածկագրով
ընդունված որոշման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացվել է բողոք:

Բողոքներ քննող անձին «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 11.04.2022թ.-ին:

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

12.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 25.04.2022թ.-ին:

25.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 համարի ծածկագիրը:

29.04.2022թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Սիուն» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

21.04.2022թ.-ին, 29.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 06.05.2022թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 որոշմամբ որոշել է՝

1. «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (պատվիրատուին) դիմել «Fujifilm» արտադրող ընկերությանը և պահանջել պաշտոնական հավաստում՝ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վեճի առարկա հանդիսացող ապրանքի չափորոշիչների՝ հրավերի տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:
3. Մնացած մասով բողոքը մերժել:
4. «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մերժել ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru